

Title: CHRIST'S CALL TO COURAGE

by Dr. w. euGene Scott, PhD Stanford University,
Preached at the Los Angeles University Cathedral

Copyright ©2007, Pastor Melissa Scott; all rights reserved

Վերնագիր. ԹԻՄՈՒԹԵՍԻ ԿՈՉՆ Է ՔԱՋ ԼԻՆԵԼ

Դր. Ժենե Սքոտի կողմից Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր,

Քարոզվել է Լոս-Անջելեսի «Յունիվերսիթի կաթողիգալ»-ում

Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են
(Բոլոր աստվածաշնչյան մեջբերումները կատարված են Աստվածաշնչի Արարատյան թարգմանությունից)

ԹԻՄՈՒԹԵՍԻ ԿՈՉՆ Է ՔԱՋ ԼԻՆԵԼ

Դե, ես նախկինում պատմել եմ այս պատմությունը, բայց ոչ երբեք ավելի հարմար ժամանակ, ինչպես այսօր է։ Մի երիտասարդ T Ford մակնիշի մեքենայով անցնում է Տեխասի նեղ տարածքի ամայի վայրերով, և հանկարծ նրա այդ հին մեքենան փչանում է։ Նա նստում է այնտեղ այդ թեժ եղանակին։ Մի հսկա, տարեց տեխասցի անասնապահ մեծ, երկար, հին սև Կաղիլակով աղմուկով անցնում է այդ ճանապարհով։ Տեսնելով մեքենան՝ երիտասարդը ձեռքի շարժումով կանգնեցնում է այն։ Նա ասում է. «Չեմ կարողանում փոքրիկ մեքենաս շարժման մեջ դնել։ Կօզնե՞ք ինձ»։ Ծեր մարդն ասում է. «Իհարկե, ես քեզ բուքսիրով կքաշեմ մինչև հաջորդ քաղաք։ Դա ճանապարհից այնքան էլ հեռու չէ»։ Այսպիսով նա այդ սև Կաղիլակը կապում է փոքր Ֆորդին և ճանապարհ ընկնում՝ նրան բուքսիրով տանելով դեպի հաջորդ փոքր քաղաքը։ Նա սկսում է մտածել իր խնդիրների մասին և մոռանում է ֆորդի մասին։ Նա պարզապես աղմուկով սլանում է։ Մոտենում է հաջորդ փոքրիկ քաղաքին, սրընթաց անցնում նրա միջով՝ նույնիսկ չդանդաղեցնելով մեքենան։ Այդ փոքր քաղաքի ոստիկանը նախօրոք զանգահարում է հաջորդ քաղաքի ոստիկանին և ասում. «Մի մեծ սև Կաղիլակ, խախտելով արագության բոլոր կանոնները, կայծակի նման աղմուկով անցնում է ճանապարհով։ Ճանապարհային արգելք դրեք և կանգնեցրեք նրան հաջորդ քաղաքում։ Բայց չեք հավատա նրան, ինչ հետո ասելու եմ։ Նրա ետևից գնում է մի հին փոքր Ֆորդ, այնպես ազդանշաններ տալով, որ կարծես փորձում է ամեն բան շրջանցել»։ Երգչախմբից և այդ երգից հետո բարձրանալով այստեղ, որպեսզի քարոզեմ, ես ինձ զգում եմ այդ Ֆորդի նման։ Բայց Աստծո Խոսքը կմարքի ճանապարհը։

Շատ լավ, ես սկսելու եմ Մաթևոսի ավետարանի 9-րդ գլխից։ Հիշեք, որ ես ունեմ քարոզներ, որոնք քարոզում եմ ամեն տարի։ Ես ձեզ ասել եմ, որ անցյալ փետրվարին սրտի կաթված ստանալուց հետո, որից ես ամբողջությամբ ապաքինվել եմ, իմ կյանքը ես թվագրում եմ «ՄԿ առաջ» և «ՄԿ հետո» և այդ ժամանակվանից ես մի նոր անուն եմ սովորել այս տարեկան ուղերձների համար. Նիտրո հաբեր։ Նիտրո հաբեր. այն մարդիկ, ովքեր ունեն սրտի խնդիրներ, իրենց մոտ պահում են նիտրո

հաբեր: Ես երբեք չեմ ունեցել դրանցից մինչև սրտի կաթված ստանալու գիշերը: Նախքան վիրահատությունը ինձ նիտրո հաբ տվեցին և ես զգացի, թե ինչպես ցավը թեթևացավ. հիմա ես գիտեմ, թե ինչու եմ մարդիկ պահում դրանցից: Այդ հաբերը չեմ հետաքրքրում ոչ ոքի, բացի այն մարդկանցից, ովքեր դրանց կարիքն ունեն: Բայց դրանք թանկ են, երբ դրանց կարիքն ունես: Ես չեմ կարծում, որ ես դրանց կարիքն այլևս ունեմ, բայց ամեն դեպքում ես իմ կողքին պահում եմ նիտրո հաբեր, նույնիսկ երբ քարոզում եմ: Ինչ-որ մեկն իմ կողքին պահում է իմ նիտրո հաբերը: Այս ուղերձները նման են դրան: Երբ դու դրանց կարիքն ունես, դրանք «հոգևոր նիտրո հաբեր» են: Եթե դու դրանց կարիքը չունես, ուղղակի մի լսիր. բայց մի փորձիր ձևանալ՝ կարծես ուշադիր լսում ես: Դա նման է նրան, որ դու գտնվում ես հատակին և ասում. «Ու՞ր եմ իմ նիտրո հաբերը»: Եվ այս ուղերձը այդ հաբերից մեկն է:

Ես սկսում եմ Մաթևոս 9-րդ գլխի 1-ին խոսքից. «Եվ նա նավը մտնելով, - խոսում է Հիսուսի մասին, - անցավ այն կողմը և եկավ իր քաղաքը: Եվ ահա մի անդամալույծ բերին նրա մոտ՝ մահճի մեջ դրած. և Հիսուսը նրանց հավատքը տեսնելով՝ անդամալույծին ասեց. «Քաջացիր, որդյակ, քո մեղքերը ներված են քեզ»: Այստեղ օգտագործվում է հունարեն *tharsei* բառը: Եվ նույն գլխի 22-րդ խոսքում, դուք կարող եք համեմատել բոլոր ավետարանները և, հավաքելով բոլոր տարրերը, կտեսնեք, որ այս պատմությունը կրկնվում է. մի հարուստ մարդ՝ Հայրոս անունով, գալով Նրա մոտ, աղաչում է Նրան իր դստեր համար, որը մահվան շեմին էր:

Նա կգա՞: Այս մարդը Հիսուսին ասում է. «Ես գիտեմ, որ եթե դու գաս և դիպչես նրան, նա կբժշկվի»: Հիմա ես ցանկանում եմ, որ դուք մտնեք կյանքի և մահվան այս դրամատիկ իրավիճակների մեջ: Անդամալույծ մարդը... մեկ այլ նկարագրության մեջ նրա ընկերները բացում են տանիքը, փորձում անցնել ամբոխի միջով և նրան իջեցնում ներքև, որովհետև նա չափազանց հիվանդ էր անձամբ Հիսուսի առջև քայլելու համար: Նրանց կարծիքով այդ մարդը բժշկության կարիք ուներ: Իսկ Հիսուսը տարօրինակ բան է ասում. «Քաջացիր (անգլերենում՝ King James թարգմանության մեջ գրված է. «Պինդ կաց»), քո մեղքերը ներված են քեզ»:

Հիմա էլ նրան քաշում է այս Հայրոս անունով մարդը: «Իմ դուստրը տանն է. եթե կարողանաս գալ և նրան դիպչել, նա կառողջանա»:

Եվ Նա ճանապարհին է. բազմությունը նրան սեղմում է, ու մի արտաքսված կին (Աստվածաշունչը նրա հիվանդությունը անվանում է «արյան տեռատեսություն»)՝ բաժանված, լքված, ամբողջ գումարը բժշկական միջոցների վրա ծախսած և առանց որևէ հույսի, ինչ-որ ձևով լսում է Հիսուսի մասին: Եվ իր սրտում Նա հավատում է, որ եթե ինչ-որ ձևով կարողանա հրելով անցնել ամբոխի միջով և ընդամենը դիպչել Նրա հագուստի ծայրին, կբժշկվի: Մնացած ամեն բան,

ինչ արել էր, ձախողվել էր: Նա փորձել էր ամեն ինչ, և ոչ մի հույս, ու հիմա նա հրելով անցնում էր այս ամբոխի միջով:

Ես լսել եմ մի պատմություն կատաղի ամբոխի մասին հարավային Կալիֆոռնիայի խաղահրապարակներից մեկում: Ձեզանից որևէ մեկը երբևէ եղե՞լ է ամբոխի մեջ, որը սեղմում է և ճզմում: Դուք կարող եք տեսնել, թե որքան սարսափեցնող է այս խեղճ տկար կնոջ վերապրումը, երբ նա հրելով անցնում էր ամբոխի միջով, որպեսզի դիպչեր Նրան: Եվ նա դիպչում է Հիսուսին: Եվ Հիսուսը... (նկարագրություններից մեկում, որը մի փոքր այլ է, քան Մաթևոսի նկարագրությունը, ավելի շուտ ոչ թե տարբեր, այլ որոշ կետեր ավելացրած) ասում է. «Ո՞վ դիպավ ինձ»: Եվ այս խելամիտ աշակերտները... (նույն նրանք, ովքեր հաշվում էին դրամները, երբ Նա ասաց. «Որտեղի՞ց հաց գնենք», նրանք, ովքեր իրար մեջ խորհում էին Վարդապետին մեկնաբանելու համար) հիմա պատրաստվում էին բացատրել Նրան. «Մի շփոթեցրու մեզ այս ամբոխի առջև: Քեզ խփում են և հրում, իսկ Դու հարցնում ես. «Ո՞վ դիպավ ինձ»»:

Դու չե՞ս տեսնում այդ «աստերոիդային բացվածքները»: Ես կարող եմ տեսնել նրանցից մեկին, որն ասում է. «Նա հարցնում է, թե ով դիպավ Իրեն: Մեզ բոլորիս ամեն կողմից հարվածում են: Հիմա ի՞նչ ասենք Նրան, տարօրինակները...Ես նկատի ունեմ, թե ինչ է պատահել Նրա հետ: Մենք քայլում ենք, եւ մեզ սեղմում են, հրում, հարվածում, իսկ Նա ասում է. «Ո՞վ դիպավ Ինձ»: Հիմա մենք պետք է գնանք և պարզենք, թե ով դիպավ Նրան: Դու լուծիր այս մեկի հարցերը, Պետրոս'»:

«Օհ, սե՛ր, բոլորը հրում են մեզ»: Ես գիտեմ, թե ինչ էր Հիսուսը ցանկանում ասել: Եթե մենք հեռուստատեսությամբ չհեռարձակվեինք, ես ձեզ կասեի, թե ինչ էր Նա ցանկանում ասել: Բայց Նա հանգիստ ասաց. «Ոչ»: Այստեղ օգտագործվում է *dunamis* բառը, որից ստանում ենք «դինամիտ» բառը: «Ես *dunamis* զգացի»: King James թարգմանության մեջ օգտագործվում է «արժանիք» բառը. ինչպիսի թույլ տարբերակ: «Ես *dunamis* զգացի» արտահայտությունը ամենից ճիշտ ձևով թարգմանվել է այսպես. «Ինձանից գորություն դուրս գնաց»: Ինչ-որ մեկը դիպավ Ինձ հավատքի հպումով, որն Ինձանից «դինամիտ» հանեց: Հետո Նա գտավ կնոջը: Նա տեսավ նրան ու ասաց. «Դուստր, - King James-ը կրկին սխալ է թարգմանում՝ ասելով. «Մի՛ վիատվիր» (հայերենում՝ քաջացի՛ր). նույն բառը՝ հրամայական եղանակով: Ոչ «մի՛ վիատվիր», ոչ էլ «պիմո՞ կաց»: Այստեղ «քաջություն» բառն է օգտագործված, և այն էլ հրամայական եղանակով: Հիսուսն անդամալույծին ասում է. «Քաջացի՛ր, քո մեղքերը ներված են քեզ»: Այն հուսահատ կնոջը, որը ձեռնարկեց հավատքի այս վերջին քայլը, հավատալով և գործելով իր համոզվածության հիման վրա, զնաց ու դիպավ Նրան, Հիսուսն ասում է. «Քաջացի՛ր, քո հավատքը քեզ բժշկեց»: Կրկին նույն բառն է երևան գալիս և միշտ հրամայական եղանակով: Բայի ժամանակը հրամայական է:

Մաթևոս 14: Նա ուղարկեց իր աշակերտներին՝ ասելով, որ նավը մտնեն և Իրենից առաջ անցնեն այն կողմը: (Ես ձեզ ձանձրացնում եմ) : Ես պետք է այնպես անեմ, որ ուղերձը իրականություն դառնա ձեզ համար, և սա Նոր կտակարանում տեղի է ունենում մի քանի անգամ: Նա ասում է իր աշակերտներին նավը մտնել և ծովի այն կողմն անցնել: Նրանք ուղղակիորեն գործում են Տիրոջ հրամանով, ամբողջությամբ Նրա կամքի մեջ: Նրանք չասացին. «Ոչ, մենք չենք գնա»: Նրանք անհնազանդ չէին: Նրանք անում էին ճիշտ այն, ինչ Տերն ասել էր նրանց անել. նավը մտնել, ծովի այն կողմն անցնել: Եվ փոթորիկ սկսեց:

Ալմանոր լիճը հիշեցնում է ինձ Գալիլեայի ծովը: Ես տեսել եմ, թե ինչպես է նույն բանն այնտեղ պատահում: Բոպենների ընթացքում խաղաղ ծովը կարող է վերածվել աղետի՝ սպառնացող փոթորկի: Իսկ փոթորիկը սկսեց գիշերը: Ես փորձել եմ նկարել այդ տեսարանը, որտեղ աշխատել եմ ճշգրտորեն արտահայտել այն, ինչ շատ նկարիչներ են փորձել արտահայտել. Հիսուսը քայլում է այդ հսկա ալիքների վրայով, և երևում են աշակերտների խուճապահար եղած սպիտակ դեմքերը, որովհետև այս փոթորկի մեջ... Անցյալ շաբաթ մենք ունեցանք այդպիսի փոթորիկներ լեռներում, և ես կցանկանայի, որ մենք բոլորս կարողանայինք ինչ-որ ձևով մի պահ պատկերացնել դա այստեղ, որպեսզի դուք զգաք փոթորկի սպառնացող ներկայությունը գիշերվա մթին: Եվ հանկարծ նրանք տեսնում են մեկին՝ ջրի վրա քայլելիս...

Նրանք երբեք չեն տեսել Հիսուսին՝ ջրի վրա քայլելիս: Ես նկատի ունեմ, որ սա հին նյութ է մեզ համար: Մեզ սովորեցրել են դեռ կիրակնօրյա դպրոցից, որ Հիսուսը քայլում է ջրի վրայով: Ես համոզված եմ, որ «Այնտեղ լինել» կինոնկարը իր գաղափարը ստացել է Հիսուսի պատմությունից: Այնտեղ այդ Չոնսի Գարդենները պատրաստվում է ընտրվել Նախագահ՝ վերջում քայլելով ջրի վրայով: Մենք դա լավ յուրացնում ենք:

Բայց փորձիր լինել այդ նավի վրա գիշերվա կեսին՝ երբեք նույնիսկ տեսած չլինելով Հիսուսին՝ ջրի վրա քայլելիս: Ահա ջրի վրա հայտնվում է այս ուրվականը: Փոթորիկը բավականին վատն է, բայց ի՞նչ է այն մյուս բանը՝ փոթորկին ուղեկցողը: Այդ ի՞նչ է փոթորկի մեջ, որը գալիս է դեպի մեզ: Եվ Հիսուսը խոսում է փոթորկի միջից և ասում.«Քաջ եղեք»: Այստեղ օգտագործվում է tharsei բառը: «Քաջ եղեք»: Դա երրորդն է:

Չորրորդը. Հովհաննես 16. Արդյո՞ք դուք նշում եք սա ձեր ուղեղում, որովհետև ես այսօր հաջողություն չեմ ունենա, եթե չկարողանամ սրանցից յուրաքանչյուրը տարածել մեր փորձառության շրջանակի մեջ, և դուք չգտնեք ձեզ այս հինգ իրավիճակներից որևէ մեկի մեջ (ես չեմ ձեզ դնում այդ իրավիճակի մեջ): Հովհաննես 16.33. աշակերտները հետևել են Նրան, տեսել Նրա մերժվածությունը, զգացել այն ցավը, երբ ամբողջը սկսում է ծափահարություններից շրջվել դեպի մերժումը, երբ Նրա

ճշմարտության լույսը բացահայտում է նրանց՝ մասնավորապես կեղծավոր և ինքնասարդարացնող փարիսեցիներին: Այսպիսով նրանք վերնատանն են, և Հիսուսն ասում է. «Աշխարհում նեղություն կունենաք»:

Բայց հետո Նա էլ ավելի ցնցող բան է հայտարարում. «Ես ձեզ հետ չեմ լինի այն առումով, ինչպես հիմա եմ ֆիզիկապես ներկա: Ես հեռանալու եմ, և աշխարհում դուք նեղություն կունենաք»:

Եվ ահա այս աշակերտները մտած են այստեղ և ունեն այն հատկությունը, ինչ բոլորս ունենք: Իրականում հեշտ է մտածել «քրիստոնեության հիանալի ժամանակի» մասին, երբ գտնվում ես ուղերձի ազդեցության տակ: Մեծ մասամբ ես քարոզում եմ ինքս ինձ, որովհետև երբ ես կանգնում եմ այստեղ և պատուհան դռնում, որի միջոցով Աստծո Խոսքը փայլում է լույսի նման, այն ինձ էլ է դիպչում: Եվ մինչ քարոզում եմ, իմ ուղեղի մի մասով կարողանում եմ ետադարձ հայացք ձգել շաբաթվա վրա և տեսնել իմ որոշ հակազդումների հիմարությունը. Աստծո ներկայության մասին մոռանալը, հենց այն ճշմարտությունները մոռանալը, որոնք ես հաղորդում եմ ձեզ՝ օգտագործվելով Աստծո կողմից: Եվ ես նոր հասկացողություն եմ ստանում: Ամեն անգամ, երբ քարոզում եմ այս ուղերձներից մեկը, ես դուրս եմ գալիս՝ շատ անգամ անհանգստացած, որովհետև ուղերձի քաշը և ճշմարտությունն այնպիսին են, որ ես անհամապատասխանություն եմ զգում այն հարկ եղած ձևով հաղորդելու հարցում, և դա բարկացնում է ինձ: Բայց համենայն դեպս, ես գիտեմ, որ այն հաղորդվել է ինձ և իմ ուղեղի այդ հատվածն ասում է. «Ես հաջորդ շաբաթ չեմ անի այն սխալները, որ արեցի անցյալ շաբաթ»: Եվ դու էլ նույնն ես անում: Դու հասկացողություն ես ստանում Աստծո Խոսքից ու այստեղից դուրս գալիս վեհ գաղափարներով և ահա ...: Դու աշակերտների նման հայտնվում ես փոթորկի մեջ:

Դե, այս աշակերտները նույնիսկ ավելին ունեին, քան դու ունես այստեղ՝ կիրակի առավոտյան: Ամեն ժամանակ նրանց հետ էր Աստծո Խոսքը՝ մարմին դարձած: Բայց հիմա Նա հայտարարում է, որ ամեն ժամանակ չի լինելու այդ հենարանը այնպես, ինչպես եղել է: Հիմա նրանք կանգնելու են ուրիշ ապագայի առջև: Ես նկատի ունեմ փոթորկում նրանք կանգնեցին մեկ այլ տեսակի «հիմա»-ի առջև: Հիմա Նա զգուշացնում է նրանց ապագայի մասին. «Պինդ կացեք, սուրբեր, ավելի վատ է լինելու»: Նա այնտեղ չի լինելու: Եվ աշխարհը, որ հակառակ է նրանց, այժմ կուժեղացնի իր հակառակությունը և նրանք կունենան սարսափելի հալածանք: Հետո Նա ասում է. «Պինդ կացեք»: Ոչ, Նա չասաց. «Պինդ կացեք»: Նա ասաց tharsei բառը՝ «Քաջ եղեք»: Նա մեկ այլ բան էլ ասաց, բայց ես ցանկանում եմ շեշտը դնել սրա վրա:

Եվ վերջինը. Գործ առաքելոց 23. Պողոսին Աստված ասել էր գնալ և Խոսքը տարածել Հռոմում: Երբ ուսումնասիրում եք Պողոսին, դժվար չէ նրան հասկանալը: Նա իրեն համարում է

մարդկության մեջ ամենապատվավոր մարդը, որն այդքան անարժան լինելով, Աստծուց ընտրվել է ասելու հեթանոս ազգերին՝ բոլոր էթնիկական խմբերին, բացի հրեա ժողովրդից, որ Աստված չի ընտրել միայն հրեա ժողովրդին, որպեսզի այն Իր ընտանիքը լինի: Նա նաև ընտրել է յուրաքանչյուր էթնիկական խմբից, և աշխարհը, ինչպես նա գիտի, միանգամայն ղեկավարվում է Հռոմի կողմից, և Նա չի ամաչում այս բարի լուրից, որը Նա հռչակում է, որովհետև այն դինամիտ է՝ «Աստծո գործություն է փրկելու համար»: Այսպիսով որտե՞ղ է աշխարհի ամենահզոր կենտրոնը, որը ղեկավարվում է սատանայի կողմից: Նա՝ Պողոսը, պատրաստվում է այս դինամիտ ուղերձը տանել այն ժամանակվա աշխարհին հայտնի ամենից հզոր կենտրոնը, և դա է նրա գոյության առաքելությունն ու պատճառը: Եվ այնտեղ հասնելիս նա անցնելու է Երուսաղեմով, որպեսզի որոշ պարզևներ բաժանի, որոնք նա ճանապարհին հավաքել էր նրանց համար, և ևս մեկ վկայություն տա այնտեղ իր մարմնավոր եղբայրներին՝ հրեաներին, որոնց համար նա ողբում էր և պատրաստ էր ինքն իրեն ուրանալ, միայն թե կարողանար փրկել նրանց, որովհետև նա սիրում էր նրանց: Բայց նրա ուղերձը այլ էթնիկական խմբերի համար է, իսկ Հռոմը այդ ամենի կենտրոնն է:

Նա գնում է: Նա խիստ քննադատության է ենթարկվում ամբոխի կողմից, ծեծվում է, փրկվում հռոմեացի պահակի միջոցով և ապա հայտնվում բանտում: Եվ նրան խոսք է հասնում, որ դավադիրները նրան սպանելու ճանապարհ էին ծրագրել: Նա մահանալու էր այդ խցում, և նա հասկացավ, որ իր կոչումն ու նպատակը ակնհայտորեն խափանված են, իսկ ծառայությունն ավարտված, բայց գիշերվա այդ ցրտին Տերը հայտնվեց նրան ու ասաց. «Ինչպես Ինձ համար Երուսաղեմում վկայեցիր, այնպես էլ պետք է Հռոմում վկայես»: Ես կավելացնեի այս խոսքը, չնայած այն բնագրում չկա.

«Ինչպես Ինձ համար Երուսաղեմում վկայեցիր», - դա ենթադրվում է, որ անկախ նրանից, թե այս գիշերն ինչպիսին է քեզ համար, Պողոս, Ես կանչել եմ քեզ, Ես քեզ ուղարկել եմ, դու դեռ վկայություն ես տալու Հռոմում: Ամեն բան Ես եմ վերահսկում, ոչ թե այս ամբոխը, ոչ նույնիսկ այս հռոմեացի պահակները: Փաստորեն, Ես... »: Եթե ես ցանկանայի հանապատրաստից ասել այն, ինչ մենք գիտենք, որովհետև մենք գիտենք պատմության մնացած մասը, Աստված օգտագործելու է հենց այդ հռոմեական բանտարկությունը նրան Հռոմ տանելու համար: Բայց Տերը հայտնվում է և ասում. «Պողոս'ս, պինդ կաց (հայերենում՝ քաջացի'ր): «Մթության մեջ սուլիր», «բերանը լայն բացած ժպտա ինչպես Փեթ Ռոբերտսոնը», «գոչիր հալելույա և լավ ժամանակ անցկացրու», «ծիծաղիր Հիսուսի համար», «փուչիկներ արա Հիսուսի համար»: Ես հուսով եմ, որ նրանք, ովքեր քարոզում են ծաղրանկարային, թույլ, մարդկանց համար պատվազրկված Հիսուսի, վերջում հայտնվում են դժոխքում՝ ամուսնացած լինելով մեկի հետ՝ տղամարդու, կամ կնոջ:

«Ավանդույթներն անվավեր են դարձրել Աստծո Խոսքը». այդ արտահայտության կիրառությունը բնավ անվավեր չի դարձնում Աստծո Խոսքը, Որը ոտք դրեց պատմության

բեմահարթակին: Նրան անվանում էին «ուտող և գինի խմող»: Դա ճշմարտություն չէ, բայց նրանք հիմնվում էին այն փաստի վրա, որ Նա հաճույք էր ստանում մեղավորների կողքին: Այս նույն գլխում գրված է, թե ինչպես է Մաթևոսը կանչվում: Մաթևոսը այդ երկրում այդ ժամանակվա կրոնական առաջնորդների տեսանկյունով ամենացածր ստոր մեղավորն էր: Նա դավաճան էր ի օգուտ հռոմեացիների, քանի որ հարկեր էր հավաքում նրանց համար և իր ապրուստը վաստակում այն ավելցուկից, որը կարողանում էր գլխանց հավաքել: Երուսաղեմի հրեական համայնքի համար ոչինչ այնքան ատելի չէր, որքան Հռոմի համար մաքսավոր աշխատողը. նա համարվում էր դավաճան: Այդ բանը հռոմեացին չէր անում, այլ հրեան, որն անցել էր հռոմեացիների կողմը՝ եկամուտ ստանալով հարկերից: Մաթևոսն ինքն իր մասին չի ասում, բայց Բուկասի ավետարանում նա անվանվում է «Բևի», այլ տեղերում՝ «Մաթևոս», դա նույն մարդն է (ինչպես «Միմոն»-ը և «Պետրոսը»): միգուցե դուք դժվարանում եք դա տարբերել որոշ տեղերում: Նրանք կանչում ու խնջույք են կազմակերպում:

Հիսուսն անցնում է Մաթևոսի կողքով. նա նստած է մաքսատան սեղանի մոտ, և Հիսուսն ասում է. «Եկ իմ ետևից»: Նա չասաց. «Դե, ես պետք է դասավորեմ գրքերս: Որոշ բաներ պետք է անեն: Պետք է այս գումարը վերցնեն և դնեն իմ թաքստոցը», որտեղ էլ դա լինի: «Նա անմիջապես թողեց իր սեղանը և գնաց Հիսուսի ետևից»: «Հասարակության կողմից մերժված մարդ», ահա գալիս է Հիսուսը, որը ցանկանում է, որ նա հետևի Իրեն: Եվ Նա չասաց. «Գնա տուն, Մաթևոս, քողարկվիր այնպես, մինչև ոչ ոք չիմանա, թե ով ես դու եղել, և թաքնվիր ժողովարանի ետևում, և երբ ես անցնեմ ժողովարանի կողքով, դուրս արի ինչպես կրոնական երկրպագող և հետևիր Ինձ»: Նա քայլում է ուղիղ դեպի այդ «մերժված մարդը»:

Կարո՞ղ ենք զարգացնել Աստվածաշնչի միտքը: Ֆունդամենտալիստները փորձում են իրենց աղջիկներին ամուսնացնել ինձ հետ ի հակադրություն նրան, թե ինչ են մտածում իմ մասին: Երբ ես ասում եմ «ֆունդամենտալիստներ», ես նրանց թշնամին եմ: Եթե նրանք չգիտեն դա, ես ասում եմ նրանց... օրինականներ: Օրինականներն ավելի շատ մարդ են տարել դժոխք իրենց ինքնարդարացնող վերաբերմունքով, քան Ամերիկայի բոլոր սրճարանները: Ես ասում եմ նրանց: Ես նրանց անփոփոխ թշնամին եմ: Եթե նրանք ասում են ինձ, ինձ համար ողջունելի է, բայց նրանց տեսակետն իմ մասին, որքան էլ վատ լինի, այն է, որ նրանք կփորձեն իրենց դուստրերին ավելի շուտ ամուսնացնել ինձ հետ, քան Մաթևոսի:

...Փորձեք ձեռք բերել այն վերաբերմունքը, ինչ նրանք ունեին Մաթևոսի նկատմամբ, և ահա գալիս է հավիտենական ճշմարտության Քարոզիչը, որը Մաթևոսին իր մեղքի մեջ ասում է. «Եկ իմ ետևից»: Նա կանչեց Մաթևոսին: Եվ ուր էլ որ Նա գնում էր, Նա մեղավորների բարեկամ էր: Նա գնում է Երիբով. Նա գնում է ընթրելու այնտեղի ամենամեծ մեղավորի հետ: Նրան անվանում էին «ուտող և գինի խմող», որովհետև Նա լավ ժամանակ էր անցկացնում:

Նա ինչ-որ արտառոց կրոնական երևույթ չէր, որը հայտնվում էր ցանկացած ժամանակ, և Նա չեկավ այդ մարդկանց մոտ...այդ անդամալուծին Նա չասաց. «Պինդ կաց: Ապա մի փոքր ժպտա»: Այն կնոջը, որն ուժասպառ էր եղել՝ տարիներ շարունակ կորցնելով առողջությունը և ամեն բան, Նա չասաց. «Պինդ կաց, տիկին»: «Պինդ կաց, անուշիկս, շարունակիր ժպտալ»: «Հիմա ժպտա Հիսուսի համար»: Դու կարող ես ասել, որ ես մեծացել եմ եկեղեցում: Երբ մտածում եմ այն Հիսուսի մասին, որ շատ մարդիկ նկարագրում են, դա ստիպում է ինձ փսխել: Նա փոթորկին չասաց. «Ժպտա»:

Նա հասարակ մարդկանց կողքին էր: Նա Պողոսին ասաց. «Քաջացիր», այլ ոչ թե «Պինդ կաց»: «Քաջացիր: Ես եմ քեզ կանչել: Ի՞նչ է այս ամենը, որ հակառակ է ինձ: Ես եմ քեզ կանչել, Ես եմ քեզ ուղարկում, և քեզ մոտ դա կստացվի: Հիմա դա քեզ այդպես չի թվում, ուստի Ես Իմ անձը դնում եմ քո և ցանկացած բանի միջև և ասում. «Քաջացիր, ես քեզ հասցնելու եմ Երուսաղեմ, իսկ Երուսաղեմից՝ Հռոմ»»:

Ահա տեսարանները: Որպեսզի հաստատեմ այն, ինչ ես ասում եմ ձեզ «քաջության» մասին... ձեզ պետք չէ շրջել, բայց եթե ցանկանում եք, կարող եք բացել Ծննդոց 35-րդ գլուխը: Հին կտակարանի Սեպտուագինտա տարբերակը հունարենով է և թարգմանվել է Քրիստոսի գալուստին անմիջապես նախորդող դարերին, և դա այն Աստվածաշունչն է, որը բոլորը լավ գիտեք, որ կարողում էր Հիսուսը և որից քարոզում էին առաքյալները: Այն 1-ին դարի հուդաիզմի Աստվածաշունչն էր և հետո դարձավ քրիստոնյաների Աստվածաշունչը: Հին կտակարանը թարգմանվեց հունարեն: Այսպիսով դուք կարող եք կարդալ Սեպտուագինտան (մենք ունենք կրկնօրինակներ) և կտեսնեք այն հունարեն բառը, որն ընտրվել է Ծննդոց 35.17-ը թարգմանելու համար, երբ Ռաբելը՝ Հակոբի սիրելի կինը, ծնում էր իր երկրորդ որդուն (Հովսեփը նրա առաջնեկն էր): Նա դժվարություն է ունենում, և մանկաբարձուհին ասում է Ռաբելին. «Մի վախեցիր», որի հակառակը կլինի. «Քաջացիր, դու ծնելու ես այս երեխային»: Եվ նա ծնեց: Նա մահացավ. դա Բենյամինի ծննդյան ողբերգությունն էր, որը նրան ավելի թանկարժեք դարձրեց Հակոբի համար և ավելի իմաստալից դարձրեց իր եղբայրներին Հովսեփի հայտնության պատմությունը, ինչպես նաև Բենյամինիին պահելը՝ որպես խորամանկ քայլ եղբայրներին արթնացնելու, որպեսզի նրանք տեսնեն, թե ինչ արեցին նրա հետ: Բայց Սեպտուագինտայում բառը նույնն է՝ գրված հրամայական եղանակով. «Քաջացիր»:

Սովորական մարգարեի Երուսաղեմի մասին վերջին օրերի մարգարեության մեջ կարող եք տեսնել, թե ինչ է լինելու վերջին օրերին, և երբ է Աստված գալու, և ինչպես է Հիսուսը՝ որպես տերերի Տեր, հեռացնելու նրանց սրտի ցավն ու արցունքները: Եվ Սովորականի մարգարեության 3-րդ գլխի մեջտեղում՝ 16-րդ խոսքում, մարգարեն, խոսելով Աստծո կողմից, ասում է. «Մի վախեցիր»: Դա

անգլերեն թարգմանությունն է: Մեպտուագինտան ունի հրամայական եղանակ. «Քաջացի՛ր», ըստ էության, որովհետև Աստված անելու է դա քեզ համար:

Այն ամենը, ինչ ես փորձում եմ լուսաբանել, այն է, որ «պինդ կաց» արտահայտությունը այդ իմաստը չունի, և մեկ անգամ «պինդ կաց»-ի փոխարեն «մի վիատվիր» ասելը նույնպես ոչինչ չի փոխում: Սա մի բառ է, որ նշանակում է «քաջություն»:

Ելից 14, 13-րդ խոսք. սա մի հատված է, որը, երբ ես պատմեմ ձեզ, անմիջապես կթարմացնի ձեր հիշողությունը: Իսրայելացիները փախչում են՝ Եգիպտոսից ազատվելով: Նրանք Կարմիր ծովի մոտ են, իսկ Փարավոնի բանակը գալիս է նրանց վրա, և Մովսեսը բարձրացնում է իր գավազանը ու ասում նրանց. «Մի վախեք, կանգնեցեք, և տեսեք Եհովայի փրկությունը»: Եվ նա բաժանում է Կարմիր ծովը, և ժողովուրդն անցնում է ցամաքով, իսկ փարավոնը հետևում է նրանց ու խորտակվում: Այդ տեսարանի մեջ կա հումոր, որի կողքով ես երբեք չեմ անցնում առանց մտածելու. Աստված այնպիսին է, ինչպիսին ես Նրան պատկերացնում եմ... որովհետև նախքան նրանց վրա ալիքները բերելը Նա զարկեց նրանց սայլերի և կառքերի անիվներին: Ես նկատի ունեմ, որ նրանք պանում են իսրայելացիների ետևից, նրանք քայլում են, կառքերը վարում, ջրերը կուտակվել են, նրանք չգիտեն՝ ինչպես, բայց գետինը չոր է: Ուստի նրանք գնում են, և հենց այն ժամանակ, երբ նրանք ամենախորը տեղում են, անիվները անջատվում են կառքերից: Նա այնպիսի Աստված է, ինչպիսին ես եմ պատկերացնում: Եվ հետո ալիքները իջնում են, ալիքները իջնում են:

Հիմա հետադարձ հայացք գցելով՝ քաջության արդյունքը կարող է լինել լավ տրամադրությունը, բայց Մովսեսը չասաց «Պինդ կացեք կամ տրամադրությունը մի գցեք: Նայեք փարավոնի բանակին և նայեք ջրին: Ես չգիտեմ, թե որքան լավ եք դուք լողանում, բայց պինդ կացեք»: Հիմա ես մինչև վերջ աշխատում եմ սրա վրա, որովհետև...

Արդյո՞ք դա ձեզ շատ չի հիշեցնում քրիստոնեական քարոզչության մասին: Գալիս եք կիրակի օրը, հագնում այդ եկեղեցական դիմակը և լսում լայն ժպտացող տկարամտին, որը եկեղեցական տոնով ասում է. «Տերն ասաց. «Պինդ կացեք»: Եվ ես կդադարեի լսել՝ փորձելով մտածել, թե ում եմ հաջորդը տեղավորելու իմ սառույցի մեքենայում: «Պինդ կացը կամ տրամադրությունը մի գցիր»-ը առնչություն չունի կյանքի հետ. դա այն չէ, ինչ Նա ասաց: Նա ասաց. «Քաջացիր»:

22 տարի է՝ ինչ ես ձեզ ասում եմ, որ հավատքն ինչ-որ կախարդական իրադարձություն չէ: Հավատքը գոյություն ունի, նախքան Աստված եկավ և մեծատառ դրեց որոշակի տեսակի հավատքի վրա: Ես այնքան շատ եմ խոսել այս մասին, որ դուք կարող եք դա ինձանից լավ քարոզել: Երբ ժամանակի լրումը եկավ, Աստված ուղարկեց Իր Որդուն: «Ոչ ոք Աստծուն չի տեսել», - Հովհաննեսն

ասում է. «Քրիստոսը *հռչակեց* Նրան», էկզեգետիկա. «հանեց Նրան վարագույրի ետևից և ի ցույց դրեց»: Եվ հավիտենական Խոսքը՝ Նա, որն Աստծո առջև էր գտնվում և կարող էր մեզ պատմել այն ամենը, ինչ մեզ անհրաժեշտ է իմանալ Աստծո մասին, և այն Աստվածը, որը, համաձայն Եփեսացիների թղթի, նախատեսել է Իր օրհնությունները փոխանցել մեզ ասված խոսքի միջոցով, գալիս է որպես Կենդանի Խոսք՝ կյանքի խոսքեր խոսելու:

Այս խոսքերը, որոնք պատմության բեմահարթակ բերվեցին, ի հայտ եկան այն ժամանակ, երբ այդ ժամանակվա լեզուն, որը կառավարում էր աշխարհը, ավելի ճշգրիտ էր, քան մարդուն հայտնի որևէ այլ լեզու: Ես սա ասել եմ ձեզ շատ անգամ. անգլերենում «post» բառը կարող է նշանակել «նախաճաշի շիլա», «փոստ», «նամակը փոստարկղի մեջ դնել», «այուն», կարող է շատ բան նշանակել: Դու պետք է կոնտեքստին նայես: Մենք այս տանիքի տակ ենք. այն չի ընկնում: Եթե ես ընկնող տերևների տակ լինեի, ես դարձյալ անգլերենում կասեի. «Ես տերևների տակ եմ», ինչպես հենց նոր ասացի: Հունարենում դու այլ բառ կօգտագործես, եթե գտնվում ես ինչ-որ բանի տակ, որը չի ընկնում: Հունարենում գոյություն ունի այնպիսի ճշգրտություն, որը չկա ուրիշ ոչ մի լեզվում, և Աստված...

(Ես փորձում եմ պարզել բառերի նշանակությունը այն երկրում, որտեղ մեծ ապստամբ Նեբրովթի օրոք մեղքի հետևանքով խառնվեցին լեզուները ...): Աստված ժամանակ է ընտրում, որպեսզի հավիտենության վարագույրի ետևից ուղարկի Մեկին, որը մեզ կպատմի այն ամենը, ինչ մենք կարիք ունենք իմանալ Աստծո մասին և կհռչակի Նրան այնպիսի բեմահարթակի վրա, որտեղ մարդուն երբևէ հայտնի ամենաճշգրիտ լեզուն կառավարում է մարդկանց մտքերը: Եվ Նա որսում և ընտրում է այն խոսքերը, որոնց Նա տալու է Իր շեշտադրումը: Logos բառը գոյություն ունի հունարեն լեզվում. այն նկարագրում է անծանոթ միջնորդի անծանոթ աստծո և մարդու միջև: Նա ընտրում է այդ բառը. «Ես կասեմ ձեզ, թե ով է «logos»-ը և Նրան ցույց կտամ ձեզ:

Հավատքը նույնպես գոյություն ունի: Եթե ես Մարսի բլրի վրա փիլիսոփա լինեի, ես կսովորեցնեի *pistis* հավատքի մասին: Pisteo-ն հունարեն բայ է. այն պետք է բայ լինի և ոչ թե գոյական: Pisteo- մենք այդ բայը դարձրել ենք «հավատալ, համոզված լինել», որը ներառում է ուղեղը: Այն մոտիկից չի բացատրում pisteo բառը: Pisteo-ն բայ էր, որը պարզ սահմանում ունի՝ ներառելով, դե, դուք գիտեք դա, ներառելով «գործողություն»՝ «հիմնված համոզմունքի վրա», «հաստատված վստահությամբ»: Այն ներառում էր կամքը. այն ներառում էր զգացմունքները. այն ներառում էր անձի ողջ էությունը: Դու կիրառում էիր pisteo, երբ գործում էիր մի բանի հիման վրա, որին հավատում էիր՝ բավարար վստահությամբ գործողությունը պահպանելու համար:

Ես ամեն առավոտ արթնանում եմ՝ հավատարով ձգողության ուժին: Եթե ես չիմանամ տեսությունը, ես փորձառությամբ գիտեմ, որ երբ ոտքերս կախում եմ մահճակալից, ես իրականում չեմ ակնկալում, որ դրանք կդիպչեն առաստաղին: Ես ակնկալում եմ, որ նրանք կդիպչեն հատակին, և համապատասխան ձևով էլ վարվում եմ: Եվ ավելի քիչ վստահություն ունենալով գիտականորեն հիմնված բնագավառների վրա՝ ես ցուցաբերեցի հավատք, երբ այսօր եկա այստեղ: Երբ լույսը կանաչ է, ես գործում եմ այն համոզմունքով, որ մյուս մարդիկ իրենց իսկ պաշտպանության համար կանգ կառնեն, որովհետև լույսը կարմիր կլինի մյուս ճանապարհի համար: Ուստի ես սեղմում եմ ոտնակը և գործում համոզմունքով՝ հաստատված լինելով վստահությամբ, որ յուրաքանչյուր խաչմերուկում նրանք, ովքեր տեսնում են կարմիր լույսը, կանգնելու են, և տեսնելով կանաչ լույսը՝ ես կգործեմ դրան համապատասխան: Դու չես կարող գոյություն ունենալ առանց այդպիսի սահմանում ունեցող հավատքի: Յուրաքանչյուր շարժում, որ դու կատարում ես, իրենից ներկայացնում է գործողություն՝ հիմնված համոզմունքի վրա, հաստատված որոշ վստահությամբ: Իմ դասն անցկացնելիս ես կլինեի օբյեկտիվ պրոֆեսոր և կասեի. «Ձեր միակ ընտրությունը առարկաներն են, ինչ դուք ընտրում եք՝ որպես ձեր համոզմունքի առարկա: Դուք էությանը *հավատ-ացող* եք: *Հավատ-ալը* կյանքի էությունն է, այն ենթադրում է գործել ինչ-որ նախադրյալի հիման վրա՝ հաստատված վստահությամբ, և միակ բանը, որ դուք կարող եք ընտրել, այն է, ինչին պատրաստվում եք հավատալ, վստահել և համապատասխանաբար գործել»:

Աստված ասում է. «Դուք շատ ընտրություններ ունեք՝ լավ և վատ. բայց ինձ դուր է գալիս այդ *pisteo* բառը, և Ես կվերցնեմ այն և կդարձնեմ Իմը»: Հավատքը *pisteo* է. մյուս բոլոր գործողությունները պարզապես «հավատք» են, փոքրիկ «հավատք»: Ես պատրաստվում եմ մեծատառով գրել այդ բառը և այդպիսի հավատքը սահմանել մի բան, որը եթե կիրառես, կտա քեզ հավիտենական կյանք. այն ձեռք է բերում Աստծո հավանությունը, դնում քեզ Նրա «ամենասիրելիների» ցուցակում և այնպես անում, որ այդ դիմամիտը կամ գործությունը Աստծուց հոսի դեպի քեզ: Ցանկացած այլ գործողություն, ես արդեն ասել եմ, կարող է լավ կամ վատ լինել (ես նույնիսկ չեմ գնահատում այն), բայց այն քեզ չի փրկի: Անկախ նրանից, թե որքան լավն է, այն քեզ չի փրկի: Եվ իմ վեճը հավատքի ներկա շատ քարոզիչների հետ այն է, որ նրանք «Աստծուն ՀԱՎԱՏԱԼԸ» փոխարինել են «հավատքին հավատալու» հետ:

Ինձ վիճակվել է հավատալ, որ «հավատքին հավատալը» կգործի: Այս տիեզերքում Աստծո սրտից դուրս եկած մի բան կա, որը հավատքը դարձնում է գործող նախապայման: Ավելի լավ է լավատես լինել, քան հոռետես. ավելի լավ է բաժակը կիսով չափ լիքը տեսնել, քան կիսով չափ դատարկ: Բայց դա քեզ չի փրկում, և «հավատքին հավատալու» քարոզիչները ունեն մարդկանց հետևորդներ, ովքեր ցանկանում են, որ հավատքը գործի իրենց համար:

Փրկող հավատքը Աստծո հանդեպ ՀԱՎԱՏՔՆ է: ՀԱՎԱՏՔՆ է, որ ասում է. «Երբ կարողանամ տեսնել, որ Աստված ասել է դա, ես մարմնովս կկառչեմ դրանից և կգործեմ Աստծո խոստմունքի հիման վրա անկախ ամեն հանգամանքից, որ ես հակառակը տեսնում եմ, և ես շարունակելու եմ գործել: Ես հավատում եմ, որ «Ով Տեր, քո Խոսքը հավիտյան հաստատ է երկնքում», «Աստված մարդ չէ, որ սուտ խոսի», - երբ Նա ասում է դա, Նա կանի: Ուստի երբ ես տեսնում եմ դա Աստծո գրքում, ես պատրաստվում եմ իմ մարմնով կառչել նրանից, ինչ Աստված ասել է, որովհետև ես հավատում եմ, որ դա ճշմարտություն է, և Աստված պաշտպան կլինի դրան, և ես վստահություն ունեմ շարունակելու անել դա չնայած նրան, թե ինչ է դրան հետևում»: Երբ Աստված տեսնում է, որ ինչ-որ մեկն անում է դա..., դա է այն ՀԱՎԱՏՔԸ, որ փրկում է: Դա է այն ՀԱՎԱՏՔԸ, որ ստիպում է Նրան Իր շնորհքի էությունից դնել մեզանում, որպեսզի գորացնի մեզ, լինի մեզ հետ, առաջնորդի մեզ: Ցանկացած այլ գործողություն, որքան էլ լավ լինի, քեզ չի կապում Աստծո հետ: Միայն ՀԱՎԱՏՔԻ գործողությունն է քեզ կապում Աստծո հետ:

Այսպիսով, եկեք անցնենք այս հանգամանքներից որևէ մեկի միջով: Որտե՞ղ ես դու նստած: Դրսի մարդիկ ոչինչ չգիտեին այդ անդամալույծ մարդու սրտի մասին: Ձեզանից որևէ մեկը, որն ունի խիղճ և իր կյանքում վատ բաների միջով է անցել, լինի դա հիվանդություն կամ որևէ այլ բան, առաջին հարցը, որ դուք տալիս եք, և սատանան գիտի, որ դուք միշտ դրա սիրահարն եք, սա է. «Ի՞նչ սխալ բան եմ արել»: Եվ բացի կեղծավորներից... (ես չեմ կարծում, որ նրանք շատ են մեր մեջ), մենք բոլորս գիտենք, որ բավականաչափ չենք արել. մենք հուսախաբ ենք արել: Այսպիսով մեր սրտի խորքում, երբ հանգամանքները մեզ տանջում են... և այս դեպքում այս մարդը, որ տանջվում էր անդամալույծ վիճակից, իր ընկերների կարծիքով նա բժշկվելու կարիք ուներ. բայց Հիսուսը, որը տեսնում է ամեն ինչի միջով, անդրադարձավ ավելի խորը խնդրին:

Նա սրտին դիպավ: Սատանան հանդիպել էր Նրան անապատում, երբ Նա թուլացած վիճակում էր: Ես նկատի ունեմ, դիր քեզ Հիսուսի տեղը: Նա հենց նոր մկրտվել էր Հովհաննեսի կողմից. աղավնին իջնում է երկնքից, և Չայնը երկնքից ասում է. «Դա է իմ սիրելի Որդին, որին Ես հավանեցի»: Շրը-խկ: Սուրբ Հոգին առաջնորդում է Նրան անապատ՝ փորձվելու: Դուք ինձ հե՞տ եք:

Հիմա ահա այդ անդամալույծ մարդը: Հիսուսը գիտի, որ Ինքը կարող է մոտենալ և բժշկել նրան: Բայց Նա մեկ այլ բան է տեսնում. մեղավորության զգացում, որն ընկճել է հոգին և սեփական թերությունը գիտակցելու պատճառով այդ մարդն էլ ավելի էր բարդացրել իր հանգամանքը: Լինում են ժամանակներ, որ ես գրեթե ցավում եմ երիտասարդների համար: Նրանք բավականին երկար չեն ապրել, որ բավական բան ունենան ներողություն խնդրելու համար, ուստի նրանք չեն կարող իրականում ամբողջ չափով իմանալ Աստծո շնորհքի մասին:

Ես հիշում եմ, որ երեխա ժամանակ ներկա էի լինում վկայության ծառայություններին: Նրանք անցկացնում էին այդ վկայության ծառայությունները, որի ժամանակ տգետ ուղեղները շատախոսում էին: Այդ ծառայություններին մասնակցում էր մոտ ինը տարեկան մի երեխա: Նա ամեն անգամ ցատկոտում էր և ասում. «Ես ուզում եմ շնորհակալություն ասել Տիրոջը ինձ փրկելու, Սուրբ Հոգով լցնելու և մեղքի կյանքից ազատելու համար»: Ինը տարեկան: Նա հավանաբար քաշել էր ճտի կամ մեկ այլ բանի փետուրները:

Դու պետք է որոշ ժամանակ ապրես և ունենաս խիղճ ու կրես անհաջողություններ, որպեսզի իմանաս, թե ինչպես սատանան կարող է քո հարցերով զբաղվել... և ոմանք, ովքեր լսում են ինձ, հավանաբար այստեղ նստած են, մինչև ձեռք չբերեն հավատք Աստծուն հավատալու համար, որովհետև նրանք չափազանց ընկճված եք: Եվ Հիսուսը, Ով գիտի, որ քաջությունը ՀԱՎԱՏՔԻ 90%-ն է. քաջություն բռնվելու Աստծուց՝ Նրա Խոսքի հիման վրա, և մարմնով կառչելու դրանից անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում, անդրադարձավ բուն խնդրին. այն մեղավորությանը, որը բոլորս զգում ենք: «Քո մեղքերը ներված են. քաջացիր»: «Քո մեղքերը», - Նա չասաց, թե նա մեղքեր չունի: Նա ասում է. «Դրանք ներված են»:

Ես Խոսքի հավատարիմ քարոզիչ եմ: Ես գրեթե ամեն միջոց կօգտագործեմ այն մարդկանց համար, ում, ես զգում եմ, որ Աստված հնարավորություն է տվել կարևոր մարդ լինել՝ Նրա համար ինչ-որ բան անելու, և ես կօգտագործեմ յուրաքանչյուր մեթոդ, որ կարող եմ, ինչպես մարզիչ՝ հոգևոր հարցերում, որպեսզի նրանք տեղ չտան սատանային: Եվ եթե նրանք ձախողվեն, հետևանքները բավականին սարսափելի են, որովհետև նրանք երբեք կրկին չեն ունենա այդ հնարավորությունը: Եվ ես կարող եմ չափազանց խիստ լինել նրանց նկատմամբ և նույնիսկ վախ օգտագործել, որպեսզի նրանք չհանձնվեն: Բայց երբ նրանք անցնում են դա, ես հավատարիմ եմ քարոզելու այս ուղերձը. Աստված Աստված է, որը տալիս է երկրորդ հնարավորություն: Աստված Աստված է, որը միզուցե երբեք չկարողանա քեզ համար կրկին ստեղծել նույն հնարավորությունը, և դա է պատճառը, որ ես ասում եմ ձախողակներին. «Մի արդարացրեք ձեր անհաջողությունը և դարձեք սատանայի գործիք ձեր «սև», «սպիտակ» կողմերը ներկելու համար: Դեմ առ դեմ կանգնեք ձեր անհաջողությանը: Բայց հետո դեմ առ դեմ կանգնելով՝ իմացեք, որ «Ձեր մեղքերը ներված են»: «Նա, ով ծածկում է իր մեղքերը, հաջողություն չի ունենա, բայց Քեզ մոտ կա ներում», - ինչպես մարգարեն աղոթեց Հին կտակարանում:

Եվ մենք չգիտենք, թե որ մեղքերն են այս անդամալույծին գամել անդամալուծության անկողնուն: Հիսուսը գիտեր, որ կար ավելի խորը խնդիր, և Նա անդրադարձավ դրան այնպես, ինչպես անդրադարձել է Գողգոթայի օրվանից մինչև այսօր: Եվ նույն ձևով Նա ցանկանում է

անդրադառնալ քո խնդրին, որտեղ էլ դու գտնվես՝ մեղքի զգացումից ճնշված. «Քաջացիր, - բարձրացիր հոգով,- քո մեղքերը ներված են»:

Այս բոլոր ապուշները սկսում են ասել. «Նա Աստծուն է հայհոյում: Միայն Աստված կարող է մեղքեր ներել»: Դուք ճիշտ եք, որովհետև Հիսուսը Աստված էր: Բայց այն ժամանակ Հիսուսն ասաց. «Լավ, ո՞րն է հեշտ, ասել. «Քո մեղքերը ներված են», թե՞ «Վերցրու մահիճդ և քայլիր»... (ներել նրա մեղքը, թե՞ բժշկել նրա խաթարված և տանջված մարմինը): Այսպիսով, որպեսզի ցույց տամ, որ ես ունեմ այս գործությունը, վերցրու մահիճդ և քայլիր»: Եվ Նա բժշկեց նրան: Բայց կարևոր ուղերձն այն է, որ Նա Իրեն դրեց հենց այն բանի մեջտեղում, ինչը կոտորում էր քաջության ընդունակությունը: Դու մեկ ուրիշի կարիքը չունես: Կա մի երգ, որտեղ ասվում է. «Ես ունեցել եմ դա», - դու մեկ ուրիշի ներման կարիքը չունես: Նրանք բավական է: Լավ է, եթե ուրիշների ներումն էլ ստանանք, բայց Նա այսօր ասում է ցանկացածի, ով ընկճվել է հանգամանքների պատճառով, նախքան Նա գործ կունենա քո հանգամանքի հետ, Նա գործ է ունենում բուն խնդրի հետ: «Քո մեղքերը ներված են»:

Նայենք երկրորդ կնոջ ծանր հուսահատ վիճակին. նա վախի մեջ է: Նա հրելով առաջ է գնում, նա անում է այն, ինչ ՀԱՎԱՏՔՆ ասել էր: Նա հետևել էր. նա լսել էր, որ Հիսուսը բժշկում է հիվանդներին: «Եթե միայն դիպչեմ, կբժշկվեմ»: Դա է հավատքը, և հավատքը գործողության մեջ, որովհետև դուք տեսնում եք այս թույլ հիվանդ կնոջը, որը ամբողջի միջով հրելով առաջ է գնում, որպեսզի դիպչի Նրան: «Ո՞վ դիպավ ինձ»: Իսկ այս ապուշ աշակերտները պատասխանում են. «Ի՞նչ նկատի ունես՝ ո՞վ դիպավ քեզ»:

«Ինձանից գործություն դուրս եկավ. դինամիտ»: Եվ հետո Նա տեսնում է կնոջը. «Քաջացիր, դուստր: Այն, ինչը քեզ այստեղ բերեց, կպահի քո բժշկությունը: Կապ չունի, թե մարդիկ ինչ են ասում», - քանի որ ոմանք սկսում են մտածել դրա մասին, և պատրաստվում են ասել. «Պահ-պահ, դու հիմար կին»: «Դուստր, ինչ-որ դու արեցիր, հավատքի ինչ մղում, որ ստիպեց քեզ հասնել Ինձ, պարզապես շարունակիր դա պահել և դու առողջ կլինես»: Չեզանից շատերը ինչ-որ տեղ ունեցել են քաջություն և հետո թուլացել են: Չեզ մոտ կրկին չի ստացվի առանց որոշ համարձակության:

Փոթորկի մեջ. դա այն մեկն է, որը հավանաբար խոսում է ինձ հետ ամենաբարձր ձայնով: Ես երբեք չեմ վրդովվում այն եղանակից, որ Աստված օգտագործում է՝ ինձ ուղարկելով այնտեղ, որտեղ Նա մտադիր է, որ փոթորիկը զարկի: Հեռուստատեսությունը կարիք ունի երգելու «Օպերատոր, Հիսուսին դիր գծի մեջ» երգը նախքան եղանակի տեսությունը հաղորդելը: Նա երբեք չի վրիպում. Նա ուղարկում է ինձ փոթորկի մեջ: Եթե կա որևէ մեկ բան, որը թույլ է տալիս ինձ իմանալ, որ Աստված գիտի, թե որտեղ եմ ես գտնվում ամեն ժամանակ, դա Նրա կարողությունն է գտնել ինձ փոթորկի մեջ: Հիմա հումորը տեղին է: Իմաստը պարզ է:

Ձեզանից քանի՞սն են ունեցել այնպիսի փորձառություն, որ արել եք ճիշտ և ճիշտ այն, ինչ մտածում էիք, որ Աստված է ցանկանում, որ անեք և այդ ամենը դժոխքի է վերածվել: Թույլ տվեք տեսնել ձեր ձեռքը: Ինչպե՞ս է Նա ծրագրում այս բոլոր բաները մեզանից յուրաքանչյուրի համար: Բավականին խորը: Աստված մեզանից յուրաքանչյուրին գտնում է փոթորկի մեջ: Ես այսօր անհաջողություն կունենամ, եթե դու տեղյակ չլինես այս դժվար իրավիճակներից որևէ մեկին: Եվ ինչպես այդ անդամալույծի դեպքում, սատանան ներկա է այդ իրավիճակներում: Ամեն մի փոթորկի մեջ ես ակնկալում եմ վատագույնը: Դա է այն եղանակը, որով հուզականորեն կառավարվում եմ ես իմ կյանքում: Ես միշտ մտածում եմ ամենավատը. ամենավատը մտածելով՝ ես ներքուստ այնպես եմ տրամադրվում, որ ինչ էլ պատահի, չկարողանա լինել ավելի վատ, քան ես մտածում էի, որ կպատահի: Դա օգնել է ինձ պահել իմ ողջամտությունը, բայց բավականին անկեղծորեն ասած՝ դա այդքան էլ շատ հավատքի ապրելակերպ չէ:

Փոթորիկը բավականին վատ է, բայց ահա գալիս է այս հրեշը՝ այս ուրվականը: Ինչու՞ Հիսուսը չհանդարտեցրեց ալիքները և չմտավ նավակ: Նա կարող էր դա անել: Սա այն եղանակն է, որով 40-րդ ալիքը կնկարահաներ դա. յուրաքանչյուր քրիստոնյա փոթորկի մեջ է: Սա այն է, ինչ դու ցանկանում ես ակնկալել. ահա գալիս է Հիսուսը՝ փառքի միջից ուղղաթիռով թռչելով, ռոտորի սայրերը լռեցնում են ալիքները: Եվ ահա մենք գտնվում ենք հանդարտության մեջ, երբ Նա իջնում է և ասում. «Պինդ կացեք»: Նա հայտնվում է այդպես ցնցող ձևով՝ նույնիսկ ավելի վախեցնող, քան փոթորիկը: «Օ, դա Դու ես: Ինչու՞ չհայտարարեցիր Քո մասին»: Ես նկատի ունեմ, որ ես այնքան զբաղված եմ իմ փոթորիկների մեջ սովերների հետ պայքարելով. ես հավանաբար բռունցքով կհարվածեմ Հիսուսին, եթե Նա հայտնվի: Դուք ինձ հետ ե՞ք:

Նա քեզ ոչ մի տեղ չի ուղարկելու, բայց երբ փոթորիկը գա, Նա կփորձի քեզ սովորեցնել, որ Ինքը կլինի փոթորկի Ուղեկիցը, և Նա ավելի մեծ է, քան փոթորիկը: Եվ Պետրոսն ասաց. «Դա ուրվական է». (Նրա հոգևոր միտք ունեցող օգնականներն էին): «Ի՞նչ է դա»: «Դե, դա ուրվական է»: Եվ Հիսուսն ասում է. «Քաջացեք, Ես եմ». Նա նրանց ուղարկեց փոթորկի մեջ:

Եթե դու ունես մեղքեր, Նա ներել է դրանք: Եթե դու ընկճվել ես հանգամանքից, շարունակիր անել այն, ինչ անում ես: Առաջ գնա: Քո հավատքը քեզ կառողջացնի: Եթե դու փոթորկի մեջ ես, և պահ առ պահ էլ ավելի սարսափազդու է դառնում, ապա Նրա խոստումն է. «Չեմ թողնի քեզ և երեսից չեմ գցի»: Եվ ինձ չի հետաքրքրում, թե ինչ է տեղի ունենում. Նա ավելի մեծ է, քան դա, և Նա ներկա է այդտեղ:

Ապագա. Նա ասում է. «Ես ձեզ հետ չեմ լինելու, և աշխարհը ձեզ խնդիրների առջև է կանգնեցնելու»: Բայց կրկին Նա Իրեն դնում է գրոյական կետի վրա. «Քաջացեք, ես հաղթել եմ աշխարհին»: Նրան մի քանի օր է մնում մինչև Գողգոթան:

Հաղթանակ: Նա գավթել է մահվան, դժոխքի և գերեզմանի բանալիները. վարագույրը պատռել է վերևից ներքև, որպեսզի Աստծուն մեզ մոտենալու հնարավորություն տա և Նա հաղթել է աշխարհին: Այս աշխարհում չկա ոչինչ, որ կարողանա հաղթել Աստծո սրբին, որը Քրիստոսում է:

Ես սա ձեզ բազում անգամ եմ ասել, ձեզանից քանի՞սն է երբևէ նյարդային ցնցում ունեցել այսօրվա խնդրի համար: Դա միշտ վաղվան է վերաբերում. ի՞նչ է լինելու վաղը: Դե, « Ինչպիսին քո օրն է, այդպես էլ քո ուժը կլինի», «Օրվա համար բավական է իր նեղությունը» աստվածաշնչյան հորդորներ են: Ինչ էլ վաղը բերի, «Ես չգիտեմ վաղվա մասին», - ինչպես հին երգն է ասում, «բայց ես գիտեմ, թե ում ձեռքին է վաղվա օրը և ես բռնել եմ Նրա ձեռքից»: «Քաջացեք»... Ես չգիտեմ, թե վաղը ինչ կործանարար բանի առջև կարող է կանգնել ինչ-որ մեկը, որը լսում է ինձ այսօր: Դու չես ունենում նյարդային ցնցում այսօրվա խնդրի համար. դա միշտ վաղվան է վերաբերում. անհանգստություն, թե ինչ է գալու ...վաղը: Աստված է վաղը գալու: Ինչ խնդրի առջև էլ վաղը կանգնես, Աստված գալու է: «Քաջացեք, ես հաղթել եմ աշխարհին»: Աստված կանչել է քեզ՝ ինչպես Պողոսին, և մինչ Նա պատրաստ է քեզ տուն տանելու, դու անելու ես այն, ինչի համար Նա քեզ կանչել է, որ անես. «Ում Աստված կանչում է, նրան կարողություն է տալիս»: Եվ ինչպես Աստված ասաց Պողոսին, վերջին խոսքն այս հանգամանքներինը չէ: Վերջին խոսքն Աստծունն է, և «ինչպես վկայեցիր Երուսաղեմում, այնպես էլ կվկայես Հռոմում»:

Թույլ տվեք ձեզ մի բան ասել: Այն մարգարեությունները, որ Կլարա Գրեյսը տվեց ինձ, իրականացել են բավականաչափ, որպեսզի ես միանգամայն զամվեմ այն ճշմարտությանը, որ եթե ես հավատարիմ լինեմ, մնացածը տեղի կունենա: Մենք զգում ենք հրաշքների համր:

Մյուսներն արդեն անցել են: Ես այս պատմությունը չափից շատ անգամ եմ պատմել, որպեսզի այսօր կրկնեմ, բայց «ուրախության նոտայի» վերջին խոստումը դեռ լիովին չի իրականացել, չի իրականացել նաև հրաշքների ողջ մասը: Երբ ես դուրս եկա «հարթավայրից» և եկա «որոշված վայր», աշխարհը բացվեց, և մենք եղանք «աշխարհով մեկ ուղղություն տվող ձայն»: Հաղորդության սեղանի «հրաշքները» բազմապատկվել են, բայց ոչ այնպես, ինչպես նա մարգարեացավ: Եվ այդ «ուրախության նոտան», ես ասում եմ իմ բժշկին և իմ թշնամիներին և մնացած բոլորին, քանի դեռ ես հավատարիմ եմ, դա այն մասն է, որ ես պետք է կատարեմ, և իմ աշխատանքն ավարտված չէ: Ձեր հովիվը ոչ մի տեղ չի գնալու, որովհետև մենք դեռ շատ բան ունենք անելու:

Եվ Տերը, որ կանչել է մեզ, երբ հանգամանքները ճնշում են, և նրանց համար, ովքեր իսկապես սրտանց ընդունում են այս ծառայությունը, ձեր մասը այնքան կարևոր է, որքան իմը: Ինչպես Դավիթն ասաց. «Նրանք, ովքեր մնացին իրերի հետ, նույն վարձքն են ստանում, ինչ նրանք, ովքեր կռվեցին մարտի դաշտում»: Նրանք, ովքեր միացել են այս ծառայությանը Աստծո կանչի միջոցով, իմացեք, որ մենք չենք վերջացրել: Ես գիտեմ, որ կան ոմանք, ովքեր կատարել են իրենց ներդրումը և հեռացել մարտի դաշտից և գնացել վարձքի ետևից, բայց դու դեռևս կարող ես Աստծո հետ մարտնչել որոշ բաների համար:

Եզեկիան ստացավ ևս 14 տարի, և դրանք նրա կյանքի լավագույն տարիներն էին: Երբ մարգարեն հայտարարեց, որ նա մահանալու է, նա երեսը շրջեց դեպի պատը՝ խնդրելով Աստծուն խնայել իր կյանքը և ավել ժամանակ տալ: Եվ այդ մեծ թագավոր Եզեկիայի համար այդ 14 տարիները, որ Աստված ողորմությամբ շնորհեց նրան, եղան նրա կյանքի լավագույն տարիները, որովհետև նրա ապրելու ցանկությունը Աստծո համար այդ բաներն անելն էր:

«Ում Տերը կանչում է, նրան կարողություն է տալիս»: Ես ատում եմ այս պատճառով հանձնվողներին, որովհետև հանձնվելը կարող է ստիպել քեզ կորցնել քո հոգին. որովհետև հանձնվելու արմատը համարձակության պակասն է, իսկ համարձակության պակասը նշանակում է քանդել ՀԱՎԱՏՔԻ կապը:

Քեզ մոտ կստացվի: Դա է պատճառը, որ մենք ամեն տարի ասում ենք. «Մենք հաջողությամբ անցանք 1998 թվականը»: «Ում Տերը կանչում է, նրան կարողություն է տալիս»: Եվ Պողոսը, այդ հանգամանքից ճնշված, ստանում է Աստծո Խոսքի մխիթարությունը: Դե, դու դա ստանում ես այսօր, ինչ հանգամանք էլ քեզ ճնշի, որովհետև նույն Աստված ասել է. «Աստծո բոլոր խոստումները նրանում այդ են և ամեն»: Եվ ինչի համար, որ Նա կանչել է քեզ անել, Նա դա ավարտին կհասցնի՝ անկախ ներկա հանգամանքից:

Այս հինգ տեղերից յուրաքանչյուրում՝ անդամալույծ մարդը, կինը, փոթորիկը, վերնատան մեջ սպազայի վախը և Հիսուսի հեռանալը, և վախը, որ քո նպատակներն ու կոչումը կխափանվեն և սատանայինը կլինի վերջին խոսքը, ուղերձը նույնն է, ինչ ես արդեն քարոզում եմ 22 տարի. քաջություն: Քաջ եղեք: Ամուր բռնվեք:

Հավատքը բարձրացնում է մարդուն և քայլում Աստծո խոստումների ուղղությամբ՝ անկախ ամեն ինչից: Մեղքի զգացումը քեզ կործանելու համար չէ, մարդկային մեթոդաբանության հուսախաբությունը քեզ կործանելու համար չէ. փոթորիկները, որ գալիս են Աստծո ծառայության ճանապարհին, նույնպես քեզ կործանելու համար չեն. ակնկալիր, որ փոթորկի Ուղեկիցը Հիսուսն է,

որն այնտեղ է, որպեսզի հանդարտեցնի փոթորիկը Իր ժամանակին և վերածի այն հրաշքի հնարավորության, ինչպես Նա արեց Պետրոսի համար, որը նույնպես քայլեց ջրի վրայով, մի բան, որը ուրիշ ոչ մի մարդ երբևէ չարեց: Եվ աշխարհը հաղթված է, և «կատարողը» ավարտին կհասցնի... մինչև Պողոսը շատ տարիներ հետո այն բանտից, որտեղ այս ուղերձը եկել էր, կարող էր ասել. «Իմ մեկնելու ժամանակը մոտեցել է, և ես պատերազմեցի բարի պատերազմը, հավատքս պահեցի, ընթացքս ավարտեցի»: Նա կարողացավ վկայել այն ճշմարտության համար, որը Աստված խոստացել էր:

Նոր կտակարանում չկա ուրիշ ոչ մի դեպք, որտեղ օգտագործվի այս tharsei բառը: Մարկոս 10: Հիսուսը... (Հիմա դա օգտագործվելու է ինչ-որ մեկի կողմից, բացի Հիսուսից: Նախորդ ժամանակներից յուրաքանչյուրում Հիսուսն էր օգտագործում այն):

Վերջինը, Մարկոս 10: Հիսուսը կրկին ամբոխի մեջ առաջ է շարժվում և Բարտիմեոս անունով մի մարդ՝ ի ծնե կույր, աղաղակում է: Նա լսում է, որ Հիսուսն այնտեղ է: Եվ տեսեք այդ կույր մարդու խուճապը: Նա լսել է Հիսուսի մասին: Նա չի կարող տեսնել Նրան, բայց հիմա նրան ասում են, որ Հիսուսն անցնում է այդտեղով, և նա սկսում է աղաղակել. «Հիսուս, օգնիր ինձ»: Եվ բոլորն ասում են. «Չայնդ կտրիր»: Եվ Հիսուսը լսեց նրան:

Եվ Հիսուսը կանչեց ու ասաց. «Ո՞վ է: Եկ ինձ մոտ»: Եվ ուրիշները գնացին Նրա մոտ, իսկ նա աղաղակում էր. «Հիսուս, օգնիր ինձ»: Եվ նրանք ասում են. «Քաջ եղիր» - tharsei, Հիսուսը կանչեց քեզ: Դա կարող էր նույնիսկ կույր մարդուն լռեցնել: Հիսուսի կանչը այն ամենն է, որի կարիքը դու ունես: Նրա կանչը. «Նա կանչել է քեզ: Քաջ եղիր»: Նրանք օգտագործել են նույն բառը՝ tharsei:

Երրորդ կողմը. այժմ ոչ թե Հիսուսն է դա ասում, այլ մեկ ուրիշը. «Քանի որ Հիսուսը կանչել է քեզ, կույր մարդ, քաջ եղիր»: Եվ նրան տարան Հիսուսի մոտ: Հիսուսը բժշկեց նրա կույր աչքերը և նրան ազատ արձակեց այդ խավարից:

Ես այսօր ասում եմ քեզ. ես քեզ ասել եմ, որ Հիսուսի պատասխանը յուրաքանչյուր խնդրի համար *քաջությունն* է, որը հավատքի սրտի բաբախյունն է: Երբեք մի ասա՝ մահանամ: «Ես հավատալու եմ Աստծուն անկախ ամեն ինչից»: Անկախ հանգամանքից, անկախ իմ մեղավորությունից Նա ասաց, որ կների ինձ. իմ ՀԱՎԱՏՔԸ ինձ առողջ է դարձնելու, երբ ես այդպես գնամ. իմ ՀԱՎԱՏՔԸ կճանաչի, որ Նա ինձ հետ է փոթորկի մեջ. իմ ՀԱՎԱՏՔԸ ինձ տեղյակ կպահի, որ ապագան Նրա հսկողության տակ է, իմ ՀԱՎԱՏՔԸ ինձ տեղյակ է պահում, որ «Ում Տերը կանչում է, նրան կարողություն է տալիս»:

Հիմա, որպես երրորդ կողմ, ես ասում եմ բոլորիդ... նախքան աշխարհների ստեղծվելը Աստծո կանչի քննությունը Աստծո Խոսքը տեսնելու, լսելու և դրականորեն արձագանքելու կարողությունն է. և ես ասում եմ, որ եթե այդ չափաբաժինը ձեր բոլորի մեջ է՝ լսել Աստծո Խոսքը և ազդվել Նրանից, ուրեմն դա նշան է նրա, որ դու կանչվածներից մեկն ես, և դու որևէ այլ բանի կարիք չունես, որ ես ասեմ քեզ, քան այն, որ ինչպիսին էլ լինի քո հանգամանքը, քանի որ դու Աստծուց կանչված ես, ուրեմն՝ «Քաջ եղիր»: Քեզ մոտ կատացվի:

Կույրը կտեսնի: Փոթորիկը կխաղաղվի: Ապագան արդեն վճռված է: Քո հիվանդությունը կծածկվի և կբուժվի. եթե ոչ այստեղ, ապա հավիտենության լույսի առողջության մեջ: Մի հանձնվիր, տեղի մի տուր, մի վազիր, մի նահանջիր: Քաջ եղիր և այդ ամենից հոսում է ՀԱՎԱՏՔԻ մնացած մասը: Եվ դա է իմ ուղերձը:

Հիմա գոհաբերության ժամանակ է:

Իրականում մեր գրախանություն է գտնվում այն գրքերից մեկը, որտեղ ես գրել եմ որոշ բան այս փորձառության մասին, բայց տարիներ առաջ ես Անգլիայի Բրիստոլ քաղաքում էի՝ Ջորջ Մյուլլերի տանը: Ես պարբերաբար գնում եմ այնտեղ. մանկատան չիրկիզվող պահարանում պահվում են նրա բնագիր ամսագրերը, և ես նայում եմ այդ հսկայական շենքերին (դրանք հինգն են), որտեղ տեղավորված է կրթության նախարարությունը: Դրանք նախագծվել են սեր Քրիստոփոր Վրենի կողմից և եղել են Ջորջ Մյուլլերի մանկատները, որոնք ամբողջությամբ կառուցվել են ՀԱՎԱՏՔՈՎ: Եվ ես քայլում եմ Բրիստոլի փողոցներով, որը տարօրինակ քաղաք է, որովհետև այն պանդոկների և եկեղեցիների քաղաք է: Գրեթե յուրաքանչյուր հաջորդ դուռ կամ պանդոկ է, կամ եկեղեցի: Այնտեղ է սկսել քարոզել Մեթոդիզմի հիմնադիր Ջոն Վեսլին, իսկ նրա եղբայրը գրել է ամենամեծ հիմներից մի քանիսը, և այս պատմական եկեղեցուն են գտնվում Չարլս Վեսլիի ձեռագրով գրված այդ բնագիր հիմներից մի քանիսի օրինակները:

Ես ցանկանում եմ այսօրվա ուղերձին ծանոթագրություն ավելացնել՝ կարդալով Չարլզ Վեսլիի՝ Ջոն Վեսլիի եղբոր այդ հիմներից մեկը.

Շրջապատված թշնամիների բանակով,
Հողմակոծված թշնամիների բանակով ներսից,
Ոչ արագ եմ փախչելու համար, ոչ ուժեղ՝ հակառակվելու,
Միայնակ դժոխքի, երկրի և մեղքի դեմ,
Միայնակ, բայց ոչ սարսափած,
Ես համարձակվում եմ հավատալ Հիսուսի անվանը:

Չնայած հազարավոր զորքեր
Հազարավոր աշխարհներ կգրավեն,
Բայց իմ հոգին չի ցնցվի
Ես ունեմ վահան, որ կընկճի նրանց կատաղությունը,
Եվ թշնամու զորքերին ետ կքշի.
Նկարում պատկերված է արյունահոսող Գառը,
Ես համարձակվում եմ հավատալ Հիսուսի անվանը:

Որպեսզի ազատվեմ սատանայի ձեռքերից,
Որպեսզի ազատ լինեմ այս չար աշխարհից,
Որպեսզի մաքրվեմ իմ մեղքերից և արձակվեմ իմ կապանքներից,
Եվ փրկվեմ ամեն անօրենությունից,
Իմ Տերը և Աստվածը երկնքից եկավ, [որպեսզի դա անի]
Ես համարձակվում եմ հավատալ Հիսուսի անվանը:

(Եվ ես հանպատրաստից կավելացնեմ, որ եթե ունես համարձակություն վստահելու Նրան,
ապա իմացիր, որ այդպիսի գին վճարելով՝ Նա քեզ չի թողնի):

Նրա անվան մեջ կա փրկություն,
Փրկություն մեղքից, մահից և դժոխքից,
Փրկություն դեպի փառավոր երանություն,
Որքա~ն մեծ փրկություն, ով կարող է ասել:
Բայց ես պահանջում եմ այն ամենը, որ Նա ունի ինձ համար,
Ես համարձակվում եմ հավատալ Հիսուսի անվանը:

Ասացեք ինձ հետ. «Մենք հաջողությամբ անցանք 1998 թվականը»:
«Մենք հաջողությամբ անցանք 1998 թվականը»:

Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են